ԴԱՏԱԿԱՆ ԴԵՊԱՐՏԱՄԵՆՏ

0009, ՀՀ, ք. Երևան, Կորյունի 15/1, 010 511 820, www.court.am

N ԴԴ-3-Ե- 3333

« 25 » ապրիլի 2024թ.

«ՓԸՐՖԵՔԹ ԱՈՒԴԻՏ» ՍՊԸ-Ի
ՏՆՕՐԵՆ Ա. ԲԱԲԱՅԱՆԻՆ

(հասցե՝ ք. Երևան, Մաշտոցի 7)

Սույնով ծանուցում եմ, որ «ԴԴ-ԷԱՃԾՁԲ-24/02» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի ձևով գնում կատարելու ընթացակարգով Դատական դեպարտամենտի կարիքների համար ներքին աուդիտի ծառայության ձեռքբերման նպատակով հայտարարված գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 2024թ. ապրիլի 08-ի որոշմամբ «Փըրֆեքթ Աուդիտ» ՍՊԸ-ն հայտարարվել է ընթացակարգի ընտրված մասնակից:

Ընթացակարգի մասով, «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն, eauction.armeps.am համակարգի (այսուհետ՝ Համակարգ) կողմից սահմանվել է անգործության ժամկետ՝ մինչև 2024թ. ապրիլի 18-ը ներառյալ: Հիշյալ անգործության ժամկետում չի բողոքարկվել պայմանագիր կնքելու մասին որոշումը:

Տեղեկացնում եմ, որ կնքվելիք պայմանագրի նախագիծը ներկայացվում է Համակարգի միջոցով և առաջարկում՝ սույն ծանուցումը և պայմանագրի նախագիծը ստանալու օրվանից հետո 5 աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային թվային ստորագրությամբ հաստատված պայմանագիրը կցել Համակարգ, իսկ որակավորման և պայմանագրի ապահովումների բնօրինակները պատվիրատուին ուղղված ուղեկցող գրությամբ ներկայացնել Դատական դեպարտամենտ (հասցե՝ ք. Երևան, Կորյունի 15/1):

Որակավորման և պայմանագրի ապահովումները ներկայացվում են Ձեր կողմից միակողմանի հաստատված հայտարարությունների՝ տուժանքների («ԴԴ-ԷԱՃԾՁԲ-24/02» ծածկագրով ընթացակարգի հրավերով (այսուհետ՝ նաև Հրավեր) ներկայացված օրինակելի ձևերին /համապատասխանաբար Հավելված 3.2, որում «Շահառուի հաշվի համարը» լրացվում է՝ 900008000664 և Հավելված 4.1, որում «Շահառուի հաշվի համարը» լրացվում է՝ 900005000758/ համապատասխան) կամ կանխիկ փողի ձևով (Կանխիկ փողի ձևով ներկայացված որակավորման ապահովումը պետք է փոխանցվի Կենտրոնական գանձապետարանում լիազորված մարմնի անվամբ բացված «900008000698» գանձապետական հաշվին, իսկ պայմանագրի ապահովումը՝ «900008000664» գանձապետական հաշվին):

Որակավորման ապահովման չափը հավասար է գնվելիք ծառայության գնման գնի 15 տոկոսին, իսկ պայմանագրի ապահովման չափը կազմում է գնման գնի 10 տոկոսը:

Միաժամանակ հայտնում եմ, որ Հրավերով սահմանված է, որ ընտրված մասնակիցը պետք է ունենա **առնվազն 4 աշխատանքային ռեսուրսներ (աուդիտորներ), որոնք պետք է բավարարեն «ԴԴ-ԷԱՃԾՁԲ-24/02» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի հրավերին կցված տեխնիկական բնութագրի 5-րդ բաժնի բ) կետում նշված չափանիշներին**: Աշխատանքային ռեսուրսների

առկայությունը հիմնավորելու համար ընտրված մասնակիցը ներկայացնում է **համապատասխան գործատուի կողմից ստորագրված երաշխավորության մասին ստորագրված գրավոր հավաստիացում և հայտարարություն՝ «Ներքին աուդիտի մասին» օրենքի 9-րդ հոդվածի 4-րդ մասով նախատեսված սահմանափակումների բացակայության մասին**:

Այս կապակցությամբ հայտնում եմ, որ անհրաժեշտ է սույն գրության երրորդ պարբերությամբ նախատեսված ժամկետում ներկայացնել նաև Հրավերով նախատեսված հիշյալ փաստաթուղթը:

Վերոնշյալ ժամկետում անհրաժեշտ փաստաթղթերը չներկայացնելու դեպքում մասնակիցը զրկվում է պայմանագիրը ստորագրելու իրավունքից:

ՂԵԿԱՎԱՐԻ ՖԻՆԱՆՍԱՏՆՏԵՍԱԿԱՆ
ՀԱՐՑԵՐՈՎ ՏԵՂԱԿԱԼ

ԱՐՇԱԿ ՎԱՐԴԱՊԵՏՅԱՆ

Կատ՝. «ԴԴ-ԷԱՃԾՁԲ-24/02» ծածկագրով
գնման ընթացակարգի համակարգող՝ Գ. Դադիվանյան
Հեռ.՝ /+37410/ 511-783, 511-788